

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՐԾՎԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2011Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 21.02.2011թ. 01/15/927-11 գրության համաձայն Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքում իրականացվել է վարչական հսկողություն՝ բացառապես համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով:

Ստուգումների արդյունքների վերաբերյալ վերլուծությունը ներկայացվում է.

0. Հողաշինության և հողօգտագործման բնագավառում.

Արծվաբերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1485հա գյուղատնտեսական նշանակության հողամասերից 3.34հա 2008թ. վարձակալության են տրամադրվել ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման պահանջներին համապատասխան: 2010-2011թթ. համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից հողիատկացումներ չեն իրականացվել :

Ընդհանուր առմամբ վերը նշված համայնքում հողաշինության և հողօգտագործման բնագավառում աշխատանքներն իրականացվում են ՀՀ ՀՕ-ի 56-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

0. ՏԻ և ՀԳՄ հարցերի բնագավառում.

Ստուգումն ընդգրկել է 2010 թվականի հունիս - 2011 թվականի հունիս ամիսները: Ստուգմամբ արձանագրվեց, որ

1. Համայնքի գործավարությունը հիմնականում տարվում է մատյանային գրանցման եղանակով: Ելից և մտից փաստաթղթերի վարումն իրականացվում է առանձին գրանցամատյաններով, որոնք թելակարված, էջակալված և կնքված են: Ստացվող և ելից թղթակցությունները կարված են համապատասխան թղթապանակներում: Մտից գրությունները համարակալված են:

2. Քաղաքացիների դիմում-բողոքները և առաջարկությունները մուտքագրվում են գրանցամատյանում, որը թելակարված, կնքված և էջակալված էր: Դրանք պահպանվում են առանձին թղթապանակում, սահմանված կարգով համարակալված են: „Նշում կատարման մասին,, սյունակը երբեմն թերի է լրացվում:

3. Համայնքի ղեկավարի կարգադրությունների և որոշումների գրանցամատյանները վարվում են առանձին, գրառումները կատարվում են խնամքով և հիմնականում գրագետ: Որոշումների գրանցամատյան չի պահվում: Դրանք համակարգչային հավաքմամբ պահվում են առանձին թղթապանակում՝ սահմանված կարգով հերթական համարակալմամբ, նաև պահվում է գյուղապետի որոշումների հաշվառման

գրանցամատյան: Որոշումները, առանձին բացառություններում, համապատասխանում են "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 5-րդ գլխի պահանջներին:

4. Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների մատյանը վարվում է, որտեղ արձանագրությունները ստորագրված են ավագանու անդամների կողմից և հաստատված համայնքի ղեկավարի կողմից: Պահվում է նաև ավագանու որոշումների հաշվառման գրանցամատյան: Ավագանու որոշումները ամրապնդված են օրենսդրորեն, առկա են անհրաժեշտ հղումները: Որոշումները, առանձին բացառություններով, մարզպետարան են առաքվում սահմանված կարգով /ՏԻՄ օրենք հոդված 30, կետ 8/: 2-րդ օրինակները կարված են առանձին թղթապանակում:

5. Համայնքի քառամյա ծրագիրը, ավագանու կանոնակարգը, գործավարության ներքին կարգը, գյուղապետարանի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները, համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելության համայնքային կարգը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքային կանոնակարգը հաստատված են, բացառությամբ համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրության, որի վրա է հրավիրվել աշխատակազմի քարտուղարի ուշադրությունը:

6. Աշխատակազմի քարտուղարի հրամանագիրքը կա, թելակարված, էջակալված և կնքված է: Հրամանները տրվում են օրենքով սահմանված կարգով:

7. Համայնքային ծառայողների նշանակման որոշումները, աշխատողների անձնական գործերը համապատասխանում են օրենսդրությանը, կազմված են խնամքով: Պաշտոնների անձնագրերը պատրաստ են, ստորագրվել և հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից:

8. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը, դրանց աշխատակարգը հաստատված է: Որպես հիմնավորում գործերում կարված են մարզպետի գրությունը հանձնաժողովում առաջադրվող մարզպետարանի ներկայացուցիչների և ավագանու որոշումը հանձնաժողովում ավագանու անդամներ առաջադրելու վերաբերյալ: Գյուղապետի կարգադրությամբ նշանակվել է նաև լիազորված անձ: Առկա է հանձնաժողովի արձանագրությունը հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին:

9. Հաստիքացուցակում ընդգրկված համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համընկնում են **անվանացանկում** նշված պաշտոնների անվանումների հետ, պահպանվել է նաև "Համայնքային ծառայության մասին" ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ որով **միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողները, առանց խորականության, ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք:**

Համայնքային ծառայողների գրանցամատյանը համընկնում է պաշտոնների անվանացանկի հետ:

10. Հստակ պահպանված է ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի կազմման կարգը. **քաղաքական պաշտոն /համայնքի ղեկավար/, հայեցողական պաշտոններ, համայնքային ծառայողներ, քաղաքացիական աշխատանք իրականացնող /անասնաբույժ/ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ:**

11. Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են սահմանված կարգով, կիսամյակային հաշվետվություններն առկա են, սակայն ձևի և բովանդակության առումով նկատելի են որոշակի թերություններ: Բացակայում են անձնագրերի վավերական պատճենները:

Արցույթների և աստեստավորումների մասին համայնքի ղեկավարի որոշումները կան, դրանց անցկացման փաթեթները պատրաստված են պահանջվող ձևով, բացված են մրցույթին մասնակցելու դիմումների գրանցման, վերապատրաստում անցած համայնքային ծառայողների և անձնական գործերի հաշվառման մատյանները:

12. Սկսված է համայնքային գրքերի վարման գործընթացը, ստուգման պահին աշխատակազմի կողմից համադրման և հասցեների ճշտման աշխատանքներ էին իրականացվում ՀՀ Ոստիկանության Բերդի անձնագրային բաժանմունքի հետ, դրան զուգընթաց կատարվում է հասցեների ճշտում, անասնազվխաքանակի հաշվառում այն հաշվով, որպեսզի հետագայում գրքերը լրացվեն հնարավորինս նվազ թերություններով:

13. Ընթանում է նաև զինապարտների գրանցամատյանի վարման և ցուցակների ճշտման գործընթացը, որը իրականացման պատասխանատվությունը գյուղապետի կարգադրությամբ դրված է աշխատակազմի քարտուղարի վրա, նրա պաշտոնի անձնագրում կատարելով համապատասխան լրացում:

14. Իրականացվում են ԱԻ և ՔՊ հարցերի հետ կապված գործառույթները: Արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման, հասցված վնասի չափերն ուսումնասիրելու և գնահատելու նպատակով համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով:

15. Գյուղապետի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով մկների և մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու և ցինկի ֆոսֆիտի բաշխումը կատարելու նպատակով: Առկա է 2010 թվականի պայմանագրային կարգով աշխատող անասնաբույժի աշխատանքի նշանակման կարգադրությունը:

0. Քաղաքաշինության բնագավառում.

Կցվում է քաղաքաշինության ոլորտում Արծվաբերդ գյուղում կատարված ստուգումների թիվ 4 արձանագրությունը:

0. Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում.

ա) Գյուղատնտեսության բնագավառում

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ Վ.Սուքոյանս, հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը և ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը՝ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքում իրականացրել են վարչական ստուգում, համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնագավառում:

Նախքան վարչական հսկողության իրականացումը, համայնքի ղեկավարը սահմանված կարգով նախապես տեղեկացվել է լիազորությունների մասին, ինչպես նաև արդյունքների բողոքարկման և գանգատարկման կարգը:

Ստուգման իրականացվել է 2010թ. համար:

Համայնքի ղեկավարը գյուղատնտեսության բնագավառում իրականացրել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

Գյուղապետի 10.01.2010թ. թիվ 1-Ա կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով՝ համայնքում 2010թ. հունվարի 1-ից 17-ը անասունների համատարած հաշվառում անցկացնելու համար: Նմանատիպ հանձնաժողով է ստեղծվել նաև 10.01.2011թ. թիվ

1-Ա կարգադրությամբ՝ 2011թ. անասունների համատարած հաշվառում անցկացնելու համար:

Սույն բնագավառում իրականացրել է պետությանը պատվիրակված հետևյալ լիազորությունները՝

Համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, կենդանիների հիվանդությունների կանխման և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար գյուղապետի 11.01.2010թ. թիվ 6 կարգադրությամբ աշխատանքային պայմանագիր է կնքվել համայնքի անասնաբույժի հետ: Նախատեսված բոլոր միջոցառումները կատարվել են ժամանակին, ըստ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության իջեցրած ժամանակացույցի:

Համայնքի տարածքում մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ կազմակերպելու համար, գյուղապետի 01.11.2010թ. թիվ 21-Ա կարգադրությամբ ստեղծվել է համայնքային հանձնաժողով: Պայքարի աշխատանքները կատարվել են ժամանակին՝ ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության իջեցրած հրահանգի:

Ստուգման արդյունքում համայնքի աշխատակազմին տրվել է խորհրդակցական և գործնական բնույթի օգնություն:

բ) Բնապահպանության բնագավառում

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ Ս.Գևորգյանս, հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը և ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը՝ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքում իրականացրել են վարչական հսկողություն, համայնքի ղեկավարի գործունեությունը բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում:

Նախքան վարչական հսկողության իրականացումը, համայնքի ղեկավարը սահմանված կարգով նախապես տեղեկացվել է, իսկ հանդիպման օրը նրան է հանձնվել Տավուշի մարզպետի 22.02.2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը, միաժամանակ բացատրվել է վարչական հսկողության առնչությամբ իրենց վերապահված իրավունքների ու պարտականությունների, պարտադիր և պատվիրակված լիազորությունների մասին, ինչպես նաև արդյունքների բողոքարկման և գանգատարկման կարգը:

Վարչական հսկողության արդյունքում պարզվեց, որ համայնքի ղեկավարը՝

- ՀՀ բնապահպանության նախարարություն և Տավուշի մարզպետարան տեղեկատվություն չի ներկայացրել հողի բերրի շերտի օգտագործման վերաբերյալ տվյալներ /հաշվառման ձևին համապատասխան/, համաձայն ՀՀ կառավարության 19.09.2003թ. թիվ 1622-Ն որոշման 15-րդ կետի և ՀՀ Տավուշի մարզպետի 06.05.2004թ. թիվ 648. 01/40 հանձնարարականի պահանջների:
- Իրավաբանական և ֆիզիկական անձանց համար ջրօգտագործման թույլտվություններ ստանալու միջոցառումներ չի իրականացրել:

Վերահսկողության արդյունքում համայնքի աշխատակազմին տրվել է խորհրդատվական և գործնական բնույթի օգնություն:

Արձանագրությունը կազմվել է 2 օրինակից, 1 օրինակը տրվել է համայնքին: Արձանագրության կազմման և հսկողության ընթացքի վերաբերյալ դիտողություններ չկան:

Ա. ՂՈՒՇՉՅԱՆ

Fyfe

Հ. ՓԱՇԻՆՅԱՆ

Shoy

Մ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

~~*Shoy*~~

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Gevorg

Վ. ՍՈՒԲՈՅԱՆ

Beuf



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ՀԱՍՏԱՑՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՏՈՒԳՄԱՆ

<< Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.2 հոդվածի պահանջներով, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 011 թվականի փետրվարի 1-ի թիվ 01/015927-11 հանձնարականի, և ՀՀ Տավուշի մարզպետի 22 փետրվարի 011 թվականի թիվ 7-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի անդամ.

Մ.Մելքոնյան - քաղաքաշինության վարչության
ճարտարապետաշինարարական խմբի գլխավոր

մասնագետ

քաղաքաշինության բնագավառի ստուգման գծով

ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ժամանակացույցի և ստուգման առաջադրանքի համաձայն 2011թ. 08.06. - իրականացրեցի Մ.Մելքոնյան համայնքի քաղաքաշինական ոլորտում համայնքի ղեկավարի պետության պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականությունը արդյունավետությունը ստուգլու նպատակով՝ ստուգում:
Ստուգումից պարզվեց.

1 << օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով կառուցապատման գործառույթները /հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետահատակագծային նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում/ նախարարության հետ համաձայնեցման աշխատանքների իրականացում

1 Նշված ժամանակահատվածում համայնքից ստացվել է թվով 2 համապատասխան

2 Համայնքի ղեկավարի կողմից կազմվող նախագծման առաջադրանքի և վերջինիս հիման վրա մշակվող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացում

2 Նշված ժամանակահատվածում համայնքից ստացվել է թվով 2 համապատասխան

3 Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքների իրականացում

3 Հաշվետու ժամանակահատվածում յԽ ԿարգճԻ

4 Համայնքի ղեկավարների կողմից հողարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքների վերահսկողության իրականացում

4

յԽ ԽարգճԻ

5.Շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման,

հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման

պահանջների կատարումը:

5

ԽարգճԻ Ե Լ ԿարգճԻ

6. Կենսագործունեության միջավայրին ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը`

ՀՀ կառավարության որոշման պահանջների համաձայն:

6

յԽ ԽարգճԻ

7. Շինարարության թույլտվությունների առկայությունը և համապատասխանությունը գործող կարգին:

7 չի ստացվել

8. Ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանությունը ՀՀ կառավարության Որոշման պահանջներին:

8 չի ստացվել

9. Ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը, քաղաքաշինական գործունեությանը առնչվող այլ գործընթացներ:

9 չի կասեցվել

10. Համայնքի կողմից մարզպետարան /մարզպետին/ ներկայացված առաջարկություններ հողհատկացումների, գլխավոր հատակագծի փոփոխության և այլի վերաբերյալ:

10 չի ներկայացվել

Հանձնաժողովի անդամ

Մ. Մելքունյան Մ. Մելքունյան

համայնքի ղեկավար Ջ. Մյուսխյան
« 08 » 06 2011թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՈՒՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՎՈՒԾԻ ՄԱՐԶԻ ՍԵՎՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2011Թ.
ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 21.02.2011թ. 01/15/927-11 գրության համաձայն Տավուշի մարզի Սևքար համայնքում իրականացվել է վարչական հսկողություն՝ բացառապես համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով:

Ստուգումների արդյունքների վերաբերյալ վերլուծությունը ներկայացվում է.

0. Հողաշինության և հողօգտագործման բնագավառում.

Սևքար համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 107.0հա գյուղատնտեսական նշանակության հողամասերից 62.55հա վարձակալության են տրամադրվել ներքին պայմանագրերով /առանց նոտարական վավերացման և պետական գրանցման/, խախտվել է ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման 7-րդ հոդվածի պահանջները:

Ընդհանուր առմամբ վերը նշված համայնքում հողաշինության և հողօգտագործման բնագավառում աշխատանքներն իրականացվում են ՀՀ ՀՕ-ի 56-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

0. ՏԻ և ՀԳՄ հարցերի բնագավառում.

Ստուգումն ընդգրկել է 2010 թվականի հունիս - 2011 թվականի հունիս ամիսները: Ստուգմամբ արձանագրվեց, որ

1. Համայնքի գործավարությունը հիմնականում տարվում է մատյանային գրանցման եղանակով: Ելից և մտից փաստաթղթերի վարումն իրականացվում է առանձին գրանցամատյաններով, որոնք թելակարված, էջակալված և կնքված են: Ստացվող և ելից թղթակցությունները կարված են համապատասխան թղթապանակներում: Մտից գրությունները համարակալված են, սակայն պայմանանիշերը երբեմն բացակայում են:

2. Քաղաքացիների դիմում-բողոքները և առաջարկությունները մուտքագրվում են գրանցամատյանում, որը թելակարված, կնքված և էջակալված էր: Դրանք պահպանվում են առանձին թղթապանակում, սահմանված կարգով համարակալված են: „Նշում կատարման մասին,, սյունակը երբեմն թերի է լրացվում:

3. Համայնքի ղեկավարի կարգադրությունների և որոշումների գրանցամատյանները վարվում են առանձին, գրառումները կատարվում են խնամքով և հիմնականում գրագետ: Որոշումների գրանցամատյան չի պահվում: Դրանք համակարգչային հավաքմամբ պահվում են առանձին թղթապանակում՝ սահմանված կարգով հերթական համարակալմամբ: Որոշումները, առանձին բացառություններում, համապատասխանում են “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 5-րդ գլխի պահանջներին:

4. Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների մատյանը վարվում է, որտեղ արձանագրությունները ստորագրված են ավագանու անդամների կողմից և հաստատված համայնքի ղեկավարի կողմից: Պահվում է նաև ավագանու որոշումների հաշվառման գրանցամատյան: Ավագանու որոշումները ամրապնդված են օրենսդրորեն, առկա են անհրաժեշտ հղումները: Որոշումները, առանձին բացառություններով, մարզպետարան են առաքվում սահմանված կարգով /ՏԻՄ օրենք հոդված 30, կետ 8/: 2-րդ օրինակները կարված են առանձին թղթապանակում:

5. Համայնքի քառամյա ծրագիրը, ավագանու կանոնակարգը, գործավարության ներքին կարգը, գյուղապետարանի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները, համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելության համայնքային կարգը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքային կանոնակարգը հաստատված են, բացառությամբ համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրության, որի վրա է հրավիրվել աշխատակազմի քարտուղարի ուշադրությունը:

6. Աշխատակազմի քարտուղարի հրամանագիրքը կա, թելակարված, էջակալված և կնքված է: Հրամանները տրվում են օրենքով սահմանված կարգով:

7. Համայնքային ծառայողների նշանակման որոշումները, աշխատողների անձնական գործերը համապատասխանում են օրենսդրությանը, կազմված են խնամքով: Պաշտոնների անձնագրերը պատրաստ են, ստորագրվել և հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից:

8. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը, դրանց աշխատակարգը հաստատված է: Որպես հիմնավորում գործերում կարված են մարզպետի գրությունը հանձնաժողովում առաջադրվող մարզպետարանի ներկայացուցիչների և ավագանու որոշումը հանձնաժողովում ավագանու անդամներ առաջադրելու վերաբերյալ: Գյուղապետի կարգադրությամբ նշանակվել է նաև լիազորված անձ: Առկա է հանձնաժողովի արձանագրությունը հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին:

9. Հաստիքացուցակում ընդգրկված համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համընկնում են **անվանացանկում** նշված պաշտոնների անվանումների հետ, պահպանվել է նաև “Համայնքային ծառայության մասին” ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ որով **միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողները, առանց խտրականության, ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք:**

Համայնքային ծառայողների գրանցամատյանը համընկնում է պաշտոնների անվանացանկի հետ:

10. Հստակ պահպանված է ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի կազմման կարգը. **քաղաքական պաշտոն /համայնքի ղեկավար/, հայեցողական պաշտոններ, համայնքային ծառայողներ, քաղաքացիական աշխատանք իրականացնող /անասնաբույժ/ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ:**

11. Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են սահմանված կարգով, կիսամյակային հաշվետվություններն առկա են, մրցույթների և ատեստավորումների մասին համայնքի ղեկավարի որոշումները կան, դրանց անցկացման փաթեթները պատրաստված են պահանջվող ձևով, բացված են մրցույթին մասնակցելու դիմումների գրանցման, վերապատրաստում անցած համայնքային ծառայողների և անձնական գործերի հաշվառման մատյանները:

12. Սկսված է համայնքային գրքերի վարման գործընթացը, ստուգման պահին աշխատակազմի կողմից համադրման և հասցեների ճշտման աշխատանքներ էին

իրականացվում ՀՀ Ոստիկանության Իջևանի անձնագրային բաժանմունքի հետ, դրան զուգընթաց կատարվում է հասցեների ճշտում, անասնագլխաքանակի հաշվառում այն հաշվով, որպեսզի հետագայում գրքերը լրացվեն հնարավորինս նվազ թերություններով:

13. Ընթանում է նաև զինապարտների գրանցամատյանի վարման և ցուցակների ճշտման գործընթացը, որը իրականացման պատասխանատվությունը գյուղապետի կարգադրությամբ դրված է աշխատակազմի քարտուղարի վրա, նրա պաշտոնի անձնագրում կատարելով համապատասխան լրացում:

14. Իրականացվում են ԱԻ և ՔՊ հարցերի հետ կապված գործառույթները: Արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման, հասցված վնասի չափերն ուսումնասիրելու և գնահատելու նպատակով համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով:

15. Գյուղապետի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով մկների և մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու և ցինկի ֆոսֆիտի բաշխումը կատարելու նպատակով: Առկա է 2010 թվականի պայմանագրային կարգով աշխատող անասնաբույժի աշխատանքի նշանակման կարգադրությունը:

16. Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է հողի վարձակալության 1 դեպք: Համայնքի ավագանու 13.04.2011թ. թիվ 6-Ա որոշմամբ և համայնքի ղեկավարի 14.05.2011թ. թիվ 18-Ա որոշմամբ 300 հա սարամասային հողատարածքներ տրվել են վարձակալության, որպես արոտավայր և խոտհարք:

0. Քաղաքաշինության բնագավառում.

Կցվում է քաղաքաշինության ոլորտում Սևքար գյուղում կատարված ստուգումների թիվ 3 արձանագրությունը:

0. Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում.

ա) Գյուղատնտեսության բնագավառում

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ Վ.Սուքոյանս, հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը և ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը՝ Տավուշի մարզի Սևքար համայնքում իրականացրել են վարչական ստուգում, համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնագավառում:

Նախքան վարչական հսկողության իրականացումը, համայնքի ղեկավարը սահմանված կարգով նախապես տեղեկացվել է լիազորությունների մասին, ինչպես նաև արդյունքների բողոքարկման և գանգատարկման կարգը:

Ստուգումն իրականացվել է 2010թ. համար:

Համայնքի ղեկավարը գյուղատնտեսության բնագավառում իրականացրել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

Գյուղապետի 25.12.2009թ. թիվ 26-Ա կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով՝ համայնքում 2010թ. հունվարի 1-ից 17-ը անասունների համատարած հաշվառում անցկացնելու համար: Նմանատիպ հանձնաժողով է ստեղծվել նաև 30.12.2010թ. թիվ 34-Ա կարգադրությամբ՝ 2011թ. անասունների համատարած հաշվառում անցկացնելու համար:

Սույն բնագավառում իրականացրել է պետությանը պատվիրակված հետևյալ լիազորությունները՝

Համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, կենդանիների հիվանդությունների կանխման և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար գյուղապետի 12.01.2010թ. թիվ 1-Ա կարգադրությամբ աշխատանքային պայմանագիր է կնքվել համայնքի անասնաբույժի հետ: Նախատեսված բոլոր միջոցառումները կատարվել են ժամանակին, ըստ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության իջեցրած ժամանակացույցի:

Համայնքի տարածքում մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ կազմակերպելու համար, գյուղապետի 22.12.2010թ. թիվ 14-Ա որոշմամբ ստեղծվել է համայնքային հանձնաժողով: Պայքարի աշխատանքները կատարվել են ժամանակին՝ ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության իջեցրած հրահանգի:

Ստուգման արդյունքում համայնքի աշխատակազմին տրվել է խորհրդակցական և գործնական բնույթի օգնություն:

բ) Բնապահպանության բնագավառում

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ Ա.Գևորգյանս, հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը և ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը՝ Տավուշի մարզի Ոսկեվան համայնքում իրականացրել են վարչական հսկողություն, համայնքի ղեկավարի գործունեությունը բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում:

Նախքան վարչական հսկողության իրականացումը, համայնքի ղեկավարը սահմանված կարգով նախապես տեղեկացվել է, իսկ հանդիպման օրը նրան է հանձնվել Տավուշի մարզպետի 22.02.2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը, միաժամանակ բացատրվել է վարչական հսկողության առնչությամբ իրենց վերապահված իրավունքների ու պարտականությունների, պարտադիր և պատվիրակված լիազորությունների մասին, ինչպես նաև արդյունքների բողոքարկման և գանգատարկման կարգը:

Վարչական հսկողության արդյունքում պարզվեց, որ համայնքի ղեկավարը՝

- ՀՀ բնապահպանության նախարարություն և Տավուշի մարզպետարան տեղեկատվություն չի ներկայացրել հողի բերրի շերտի օգտագործման վերաբերյալ տվյալներ /հաշվառման ձևին համապատասխան/, համաձայն ՀՀ կառավարության 19.09.2003թ. թիվ 1622-Ն որոշման 15-րդ կետի և ՀՀ Տավուշի մարզպետի 06.05.2004թ. թիվ 648. 01/40 հանձնարարականի պահանջների:
- Իրավաբանական և ֆիզիկական անձանց համար ջրօգտագործման թույլտվություններ ստանալու միջոցառումներ չի իրականացրել:

Վերահսկողության արդյունքում համայնքի աշխատակազմին տրվել է խորհրդատվական և գործնական բնույթի օգնություն:

Արձանագրությունը կազմվել է 2 օրինակից, 1 օրինակը տրվել է համայնքին: Արձանագրության կազմման և հսկողության ընթացքի վերաբերյալ դիտողություններ չկան:

Ա. ՂՈՒՇՁՅԱՆ *Eger*

Ա. ՄԱՐԴԱՆՅԱՆ *Chirak*

Մ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ~~_____~~ *Melak*

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ *Gevorg*

Վ. ՍՈՒԲՈՅԱՆ *Subo*



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀԱՍՏԱՑՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՏՈՒԳՄԱՆ

<< Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.2 հոդվածի պահանջներով, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 011 թվականի փետրվարի 1-ի թիվ 01/015927-11 հանձնարականի, և ՀՀ Տավուշի մարզպետի 22 փետրվարի 011թվականի թիվ 7-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի անդամ.

Մ.Մելքունյան - քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական խմբի գլխավոր

մասնագետ

քաղաքաշինության բնագավառի ստուգման գծով

ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ժամանակացույցի և ստուգման առաջադրանքի համաձայն 2011թ. Մայիսի 24/24 իրականացրեցի Մելքունյան համայնքի քաղաքաշինական ոլորտում համայնքի ղեկավարի պետության պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականությունը արդյունավետությունը ստուգլու նպատակով՝ ստուգում:

Ստուգումից պարզվեց.

1 << օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով կառուցապատման գործառույթները /հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետահատակագծային նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում/ նախարարության հետ համաձայնեցման աշխատանքների իրականացում

1 Նշված ժամանակահատվածում համայնքից ստացվել է թվով չե իրականացվեց

2 Համայնքի ղեկավարի կողմից կազմվող նախագծման առաջադրանքի և վերջինիս հիման վրա մշակվող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացում

2 Նշված ժամանակահատվածում համայնքից ստացվել է թվով չե 4/4

3 Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքների իրականացում

3 Հաշվետու ժամանակահատվածում չի կատարվել

4 Համայնքի ղեկավարների կողմից հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքների վերահսկողության իրականացում

4

բարձրագույն 5 ցանկացա՞նք

5 Շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման,

հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման

պահանջների կատարումը:

5

չի կատարվել

6 Կենսագործունեության միջավայրին ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը՝

ՀՀ կառավարության որոշման պահանջների համաձայն:

6

չի կատարվել

7. Շինարարության թույլտվությունների առկայությունը և համապատասխանությունը գործող կարգին:

7 չ/ չ չ/ չ

8. Ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանությունը կառավարության կողմից ներդրման պահանջներին:

8 չ/ չ չ/ չ


9. Ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը, քաղաքաշինական գործունեությանը առնչվող այլ գործընթացներ:

9 չ/ չ չ/ չ

10. Համայնքի կողմից մարզպետարան /մարզպետին/ ներկայացված առաջարկություններ հողհատկացումների, գլխավոր հատակագծի փոփոխության և այլի վերաբերյալ:

10 չ/ չ չ/ չ

Հանձնաժողովի անդամ



Մ. Մելքունյան

Համայնքի ղեկավար

L. Pirogova

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱԶԱԶՈՒՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2011Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 21.02.2011թ. 01/15/927-11 գրության համաձայն Տավուշի մարզի Աչաջուր համայնքում իրականացվել է վարչական հսկողություն՝ բացառապես համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով:

Ստուգումների արդյունքների վերաբերյալ վերլուծությունը ներկայացվում է.

0. Հողաշինության և հողօգտագործման բնագավառում.

Աչաջուր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1326.29 հա գյուղատնտեսական նշանակության հողամասերից 4.17հա վարձակալության են տրամադրվել ներքին պայմանագրերով /առանց նոտարական վավերացման և պետական գրանցման/, խախտվել է ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման 7-րդ հոդվածի պահանջները, իսկ 7.59 հա վարձակալության են տրամադրվել ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման 7-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Ընդհանուր առմամբ վերը նշված համայնքում հողաշինության և հողօգտագործման բնագավառում աշխատանքներն իրականացվում են ՀՀ ՀՕ-ի 56-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

0. ՏԻ և ՀԳՄ հարցերի բնագավառում.

Ստուգումն ընդգրկել է 2010 թվականի հունիս – 2011 թվականի հունիս ամիսները: Ստուգմամբ արձանագրվեց, որ

1. Համայնքի գործավարությունը հիմնականում տարվում է մատյանային գրանցման եղանակով: Ելից և մտից փաստաթղթերի վարումն իրականացվում է առանձին գրանցամատյաններով, որոնք թելակարված, էջակալված և կնքված են: Ստացվող և ելից թղթակցությունները կարված են համապատասխան թղթապանակներում: Մտից գրությունները համարակալված են, սակայն պայմանանիշերը երբեմն բացակայում են:

2. Քաղաքացիների դիմում-բողոքները և առաջարկությունները մուտքագրվում են գրանցամատյանում, որը թելակարված, կնքված և էջակալված էր: Դրանք պահպանվում են առանձին թղթապանակում, սահմանված կարգով համարակալված են: Նշում կատարման մասին,, սյունակը երբեմն թերի է լրացվում:

3. Համայնքի ղեկավարի կարգադրությունների և որոշումների գրանցամատյանները վարվում են առանձին, գրառումները կատարվում են խնամքով և հիմնականում գրագետ: Որոշումների գրանցամատյանը վարվում է: Դրանք նաև համակարգչային հավաքմամբ պահվում են առանձին թղթապանակում՝ սահմանված կարգով հերթական համարակալմամբ:

Որոշումները, առանձին բացառություններում, համապատասխանում են “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 5-րդ գլխի պահանջներին:

4. Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների մատյանը վարվում է, որտեղ արձանագրությունները ստորագրված են ավագանու անդամների կողմից և հաստատված համայնքի ղեկավարի կողմից: Պահվում է նաև ավագանու որոշումների հաշվառման գրանցամատյան: Ավագանու որոշումները ամրապնդված են օրենսդրորեն, առկա են անհրաժեշտ հղումները: Որոշումները, առանձին բացառություններով, մարզպետարան են առաքվում սահմանված կարգով /ՏԻՄ օրենք հոդված 30, կետ 8/ 2-րդ օրինակները կարված են առանձին թղթապանակում:

5. Համայնքի քառամյա ծրագիրը, ավագանու կանոնակարգը, գործավարության ներքին կարգը, գյուղապետարանի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները, համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելության համայնքային կարգը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքային կանոնակարգը հաստատված են, բացառությամբ համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրության, որի վրա է հրավիրվել աշխատակազմի քարտուղարի ուշադրությունը:

6. Աշխատակազմի քարտուղարի հրամանագիրը կա, թելակարված, էջակալված և կնքված է: Հրամանները տրվում են օրենքով սահմանված կարգով:

7. Համայնքային ծառայողների նշանակման որոշումները, աշխատողների անձնական գործերը համապատասխանում են օրենսդրությանը, կազմված են խնամքով: Պաշտոնների անձնագրերը պատրաստ են, ստորագրվել և հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից:

8. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը, դրանց աշխատակարգը հաստատված է: Որպես հիմնավորում գործերում կարված են մարզպետի գրությունը հանձնաժողովում առաջադրվող մարզպետարանի ներկայացուցիչների և ավագանու որոշումը հանձնաժողովում ավագանու անդամներ առաջադրելու վերաբերյալ: Գյուղապետի կարգադրությամբ նշանակվել է նաև լիազորված անձ: Առկա է հանձնաժողովի արձանագրությունը հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին:

9. Հաստիքացուցակում ընդգրկված համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համընկնում են **անվանացանկում** նշված պաշտոնների անվանումների հետ, պահպանվել է նաև “Համայնքային ծառայության մասին” ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ որով **միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողները, առանց խտրականության, ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք:**

Համայնքային ծառայողների գրանցամատյանը համընկնում է պաշտոնների անվանացանկի հետ:

10. Հստակ պահպանված է ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի կազմման կարգը. **քաղաքական պաշտոն /համայնքի ղեկավար/, հայեցողական պաշտոններ, համայնքային ծառայողներ, քաղաքացիական աշխատանք իրականացնող /անասնաբույժ/ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ:**

11. Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են սահմանված կարգով, կիսամյակային հաշվետվություններն առկա են, մրցույթների և ատեստավորումների մասին համայնքի ղեկավարի որոշումները կան, դրանց անցկացման փաթեթները պատրաստված են պահանջվող ձևով, բացված են մրցույթին մասնակցելու դիմումների գրանցման,

վերապատրաստում անցած համայնքային ծառայողների և անձնական գործերի հաշվառման մատյանները:

12. Սկսված է համայնքային գրքերի վարման գործընթացը, ստուգման պահին աշխատակազմի կողմից համադրման և հասցեների ճշտման աշխատանքներ էին իրականացվում ՀՀ Ոստիկանության Իջևանի անձնագրային բաժանմունքի հետ, դրան զուգընթաց կատարվում է հասցեների ճշտում, անասնագլխաքանակի հաշվառում այն հաշվով, որպեսզի հետագայում գրքերը լրացվեն հնարավորինս նվազ թերություններով: Նկատվում է որոշակի դանդաղություն, որի վրա է հրավիրվել աշխատակազմի քարտուղարի ուշադրությունը, ում առաջարկվել է 15 օրյա ժամկետում ավարտել գործընթացը:

13. Ընթանում է նաև զինապարտների գրանցամատյանի վարման և ցուցակների ճշտման գործընթացը, որը իրականացման պատասխանատվությունը գյուղապետի կարգադրությամբ դրված է աշխատակազմի քարտուղարի վրա, նրա պաշտոնի անձնագրում կատարելով համապատասխան լրացում:

14. Իրականացվում են ԱԻ և ՔՊ հարցերի հետ կապված գործառույթներն օրենքով համայնքի ղեկավարին տրված լիազորությունների շրջանակում: Առաջարկվել է արագացնել համայնքի քաղաքաշտապանության պլանի կազմումը:

15. Գյուղապետի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով մկների և մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու և ցինկի ֆոսֆիտի բաշխումը կատարելու նպատակով: Առկա է 2010 թվականի պայմանագրային կարգով աշխատող անասնաբույժի աշխատանքի նշանակման կարգադրությունը:

0. Քաղաքաշինության բնագավառում.

Կցվում է քաղաքաշինության ոլորտում Աչաջուր գյուղում կատարված ստուգումների թիվ 2 արձանագրությունը:

0. Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում.

ա) Գյուղատնտեսության բնագավառում

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ Վ.Սուքոյանս, հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը և ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը՝ Տավուշի մարզի Աչաջուր համայնքում իրականացրել են վարչական ստուգում, համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնագավառում:

Նախքան վարչական հսկողության իրականացումը, համայնքի ղեկավարը սահմանված կարգով նախապես տեղեկացվել է լիազորությունների մասին, ինչպես նաև արդյունքների բողոքարկման և գանգատարկման կարգը:

Ստուգումն իրականացվել է 2010թ. համար:

Համայնքի ղեկավարը գյուղատնտեսության բնագավառում իրականացրել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

Գյուղապետի 30.12.2010թ. թիվ 62-Ա կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով՝ համայնքում 2011թ. հունվարի 1-ից 17-ը անասունների համատարած հաշվառում անցկացնելու համար:

Սույն բնագավառում իրականացրել է պետությանը պատվիրակված հետևյալ լիազորությունները՝

Համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, կենդանիների հիվանդությունների կանխման և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար գյուղապետի 13.01.2010թ. թիվ 1 և թիվ 2 աշխատանքային պայմանագրեր է կնքվել համայնքի անասնաբույժների հետ: Նախատեսված բոլոր միջոցառումները կատարվել են ժամանակին, ըստ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության իջեցրած ժամանակացույցի:

Համայնքի տարածքում մկենանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ կազմակերպելու համար, գյուղապետի 21.11.2010թ. թիվ 60-Ա կարգադրությամբ ստեղծվել է համայնքային հանձնաժողով: Պայքարի աշխատանքները կատարվել են ժամանակին՝ ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության իջեցրած հրահանգի:

Ստուգման արդյունքում համայնքի աշխատակազմին տրվել է խորհրդակցական և գործնական բնույթի օգնություն:

բ) Բնապահպանության բնագավառում

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ Ս.Գևորգյանս, հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը և ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը՝ Տավուշի մարզի Աչաջուր համայնքում իրականացրել են վարչական հսկողություն, համայնքի ղեկավարի գործունեությունը բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում:

Նախքան վարչական հսկողության իրականացումը, համայնքի ղեկավարը սահմանված կարգով նախապես տեղեկացվել է, իսկ հանդիպման օրը նրան է հանձնվել Տավուշի մարզպետի 22.02.2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը, միաժամանակ բացատրվել է վարչական հսկողության առնչությամբ իրենց վերապահված իրավունքների ու պարտականությունների, պարտադիր և պատվիրակված լիազորությունների մասին, ինչպես նաև արդյունքների բողոքարկման և գանգատարկման կարգը:


Վարչական հսկողության արդյունքում պարզվեց, որ համայնքի ղեկավարը.

- ՀՀ բնապահպանության նախարարություն և Տավուշի մարզպետարան տեղեկատվություն չի ներկայացրել հողի բերրի շերտի օգտագործման վերաբերյալ տվյալներ՝ /հաշվառման ձևին համապատասխան/, համաձայն ՀՀ կառավարության 19.09.2003թ. թիվ 1622-Ն որոշման 15-րդ կետի և ՀՀ Տավուշի մարզպետի 06.05.2004թ. թիվ 648. 01/40 հանձնարարականի պահանջների:
- Իրավաբանական և ֆիզիկական անձանց համար ջրօգտագործման թույլտվություններ ստանալու միջոցառումներ չի իրականացրել:

Վերահսկողության արդյունքում համայնքի աշխատակազմին տրվել է խորհրդատվական և գործնական բնույթի օգնություն:

Արձանագրությունը կազմվել է 2 օրինակից, 1 օրինակը տրվել է համայնքին: Արձանագրության կազմման և հսկողության ընթացքի վերաբերյալ դիտողություններ չկան:

Ս. ՂՈՒՇՁՅԱՆ *Էջմյ*
Ա. ՄԱՐԴԱՆՅԱՆ *Ա. Մարտիրոսյան*
Մ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ~~_____~~ *Բաղ*
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ *Մեծագործ*
Վ. ՍՈՒՔՈՅԱՆ *Սոսի*



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՈՒՈՐՏԻ ՍՏՈՒԳՄԱՆ

<< Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.2 հոդվածի պահանջներով, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 011 թվականի փետրվարի 1-ի թիվ 01/015927-11 հանձնարականի, և ՀՀ Տավուշի մարզպետի 22 փետրվարի 011 թվականի թիվ 7-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի անդամ.

Մ.Մելքունյան - քաղաքաշինության վարչության
ճարտարապետաշինարարական խմբի գլխավոր

մասնագետ

քաղաքաշինության բնագավառի ստուգման գծով

ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ժամանակացույցի և ստուգման առաջադրանքի համաձայն 2011թ. Մայիս 12 թ. - իրականացրեցի Մելքունյան համայնքի քաղաքաշինական ոլորտում համայնքի ղեկավարի պետության պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականությունը արդյունավետությունը ստուգլու նպատակով՝ ստուգում:

Ստուգումից պարզվեց.

1 << օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով կառուցապատման գործառույթները /հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետահատակագծային նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում/ նախարարության հետ համաձայնեցման աշխատանքների իրականացում

1 Նշված ժամանակահատվածում համայնքից ստացվել է թվով 2 խառնակաշար

2 Համայնքի ղեկավարի կողմից կազմվող նախագծման առաջադրանքի և վերջինիս հիման վրա մշակվող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացում

2 Նշված ժամանակահատվածում համայնքից ստացվել է թվով 2 խառնակաշար

3 Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքների իրականացում

3 Հաշվետու ժամանակահատվածում չ/ կապակցվել:

4 Համայնքի ղեկավարների կողմից հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքների վերահսկողության իրականացում

4

չ/ կապակցվել:

5 Շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման,

հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման

պահանջների կատարումը:

5

չ/ կապակցվել:

6 Կենսագործունեության միջավայրին ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը՝

ՀՀ կառավարության որոշման պահանջների համաձայն:

6

չ/ կապակցվել:

7. Շինարարության թույլտվությունների առկայությունը և համապատասխանությունը գործող կարգին:

7 Կոմիտաս 62 թիվ 2 շին. թույլտվություն
Կոմիտաս 62 թիվ 2 շին. թույլտվություն

8. Ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանությունը կառավարության Որոշման պահանջներին:

8 Չի չհամապատասխանում

9. Ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը, քաղաքաշինական գործունեությանը առնչվող այլ գործընթացներ:

9 Չի կասեցվել

10. Համայնքի կողմից մարզպետարան /մարզպետին/ ներկայացված առաջարկություններ հողհատկացումների, գլխավոր հատակագծի փոփոխության և այլի վերաբերյալ:

10 Չի ներկայացվել

Հանձնաժողովի անդամ

Ք. Մելքունյան

համայնքի ղեկավար

Վ. Գևորգյան

<<12> 05 2011թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2011Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 21.02.2011թ. 01/15/927-11 գրության համաձայն Տավուշի մարզի Ոսկեվան համայնքում իրականացվել է վարչական հսկողություն՝ բացառապես համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով:

Ստուգումների արդյունքների վերաբերյալ վերլուծությունը ներկայացվում է.

0. Հողաշինության և հողօգտագործման բնագավառում.

Ոսկեվան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 36.6հա գյուղատնտեսական նշանակության հողամասերից 9.5հա վարձակալության են տրամադրվել ներքին պայմանագրերով /առանց նոտարական վավերացման և պետական գրանցման/, խախտվել է ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման 7-րդ հոդվածի պահանջները:

Ընդհանուր առմամբ վերը նշված համայնքում հողաշինության և հողօգտագործման բնագավառում աշխատանքներն իրականացվում են ՀՀ ՀՕ-ի 56-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

0. ՏԻ և ՀԳՄ հարցերի բնագավառում.

Ստուգումն ընդգրկել է 2010 թվականի հունվար - 2011 թվականի մայիս ամիսները: Ստուգմամբ արձանագրվեց, որ

1. Համայնքի գործավարությունը հիմնականում տարվում է մատյանային գրանցման եղանակով: Ելից և մտից փաստաթղթերի վարումն իրականացվում է առանձին գրանցամատյաններով, որոնք թելակարված, էջակալված և կնքված են: Ստացվող և ելից թղթակցությունները կարված են համապատասխան թղթապանակներում: Մտից գրությունները համարակալված են, սակայն պայմանանիշերը երբեմն բացակայում են:

2. Քաղաքացիների դիմում-բողոքները և առաջարկությունները մուտքագրվում են գրանցամատյանում, որը թելակարված, կնքված և էջակալված էր: Դրանք պահպանվում են առանձին թղթապանակում, սահմանված կարգով համարակալված են: „Նշում կատարման մասին,, սյունակը երբեմն թերի է լրացվում:

3. Համայնքի ղեկավարի կարգադրությունների և որոշումների գրանցամատյանները վարվում են առանձին, գրառումները կատարվում են խնամքով և հիմնականում գրագետ: Որոշումների գրանցամատյան չի պահվում: Դրանք համակարգչային հավաքմամբ պահվում են առանձին թղթապանակում՝ սահմանված կարգով հերթական համարակալմամբ: Որոշումները, առանձին բացառություններում, համապատասխանում են “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 5-րդ գլխի պահանջներին:

4. Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների մատյանը վարվում է, որտեղ արձանագրությունները ստորագրված են ավագանու անդամների կողմից և հաստատված համայնքի ղեկավարի կողմից: Պահվում է նաև ավագանու որոշումների հաշվառման գրանցամատյան: Ավագանու որոշումները ամրապնդված են օրենսդրորեն, առկա են անհրաժեշտ հղումները: Որոշումները, առանձին բացառություններով, մարզպետարան են առաքվում սահմանված կարգով /ՏԻՄ օրենք հոդված 30, կետ 8/: 2-րդ օրինակները կարված են առանձին թղթապանակում:

5. Համայնքի քառամյա ծրագիրը, ավագանու կանոնակարգը, գործավարության ներքին կարգը, գյուղապետարանի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները, համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելության համայնքային կարգը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքային կանոնակարգը հաստատված են, բացառությամբ համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրության, որի վրա է հրավիրվել աշխատակազմի քարտուղարի ուշադրությունը:

6. Աշխատակազմի քարտուղարի հրամանագիրքը կա, թելակարված, էջակալված և կնքված է: Հրամանները տրվում են օրենքով սահմանված կարգով:

7. Համայնքային ծառայողների նշանակման որոշումները, աշխատողների անձնական գործերը համապատասխանում են օրենսդրությանը, կազմված են խնամքով: Պաշտոնների անձնագրերը պատրաստ են, ստորագրվել և հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից:

8. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը, դրա աշխատակարգը հաստատված է: Որպես հիմնավորում գործերում կարված են մարզպետի գրությունը հանձնաժողովում առաջադրվող մարզպետարանի ներկայացուցիչների և ավագանու որոշումը հանձնաժողովում ավագանու անդամներ առաջադրելու վերաբերյալ: Գյուղապետի կարգադրությամբ նշանակվել է նաև լիազորված անձ: Առկա է հանձնաժողովի արձանագրությունը հանձնաժողովի նախագահ ընտրելու մասին:

9. Հաստիքացուցակում ընդգրկված համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համընկնում են **անվանացանկում** նշված պաշտոնների անվանումների հետ, պահպանվել է նաև “Համայնքային ծառայության մասին” ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ որով **միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողները, առանց խտրականության, ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք:**

Համայնքային ծառայողների գրանցամատյանը համընկնում է պաշտոնների անվանացանկի հետ:

10. Հստակ պահպանված է ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի կազմման կարգը. **քաղաքական պաշտոն /համայնքի ղեկավար/, հայեցողական պաշտոններ, համայնքային ծառայողներ, քաղաքացիական աշխատանք իրականացնող /անասնաբույժ/ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ:**

11. Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են սահմանված կարգով, կիսամյակային հաշվետվություններն առկա են, մրցութային և ատեստավորումների մասին համայնքի ղեկավարի որոշումները կան, դրանց անցկացման փաթեթները պատրաստված են պահանջվող ձևով, բացված են մրցութային մասնակցելու դիմումների գրանցման, վերապատրաստում անցած համայնքային ծառայողների և անձնական գործերի հաշվառման մատյանները:

12. Սկսված է համայնքային գրքերի վարման գործընթացը, ստուգման պահին աշխատակազմի կողմից համադրման և հասցեների ճշտման աշխատանքներ էին իրականացվում ՀՀ Ոստիկանության Իջևանի անձնագրային բաժանմունքի հետ, դրան զուգընթաց կատարվում է հասցեների ճշտում, անասնագլխաքանակի հաշվառում այն հաշվով, որպեսզի հետագայում գրքերը լրացվեն հնարավորինս նվազ թերություններով:

13. Ընթանում է նաև զինապարտների գրանցամատյանի վարման և ցուցակների ճշտման գործընթացը, որը իրականացման պատասխանատվությունը գյուղապետի կարգադրությամբ դրված է աշխատակազմի քարտուղարի վրա, նրա պաշտոնի անձնագրում կատարելով համապատասխան լրացում:

14. Իրականացվում են ԱԻ և ՔՊ հարցերի հետ կապված գործառույթները: Արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման, հասցված վնասի չափերն ուսումնասիրելու և գնահատելու նպատակով համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով: Գյուղապետի նախաձեռնությամբ գյուղամիջում կառուցվել է 30 տ տարողությամբ ջրամբար, որին հրդեհի դեպքում միաժամանակ կարող են մոտենալ և լիցքավորվել 4 հրշեջ մեքենաներ:

15. Գյուղապետի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով մկների և մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու և ցինկի ֆոսֆիտի բաշխումը կատարելու նպատակով: Առկա է 2010 թվականի պայմանագրային կարգով աշխատող անասնաբույժի աշխատանքի նշանակման կարգադրությունը:

16. Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է հողի վարձակալության 1 փաստ, որով 200քմ հողատարածք է հատկացվել “Օրանժ” ընկերությանը՝ ամիսը 30 հազ. դրամ վարձավճարով:

0. Քաղաքաշինության բնագավառում.

Կցվում է քաղաքաշինության ոլորտում Ոսկեվան գյուղում կատարված ստուգումների թիվ 1 արձանագրությունը:

0. Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում.

ա) Գյուղատնտեսության բնագավառում

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ Վ.Սուքոյանս, հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը և ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը՝ Տավուշի մարզի Ոսկեվան համայնքում իրականացրել են վարչական ստուգում, համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնագավառում:

Նախքան վարչական հսկողության իրականացումը, համայնքի ղեկավարը սահմանված կարգով նախապես տեղեկացվել է լիազորությունների մասին, ինչպես նաև արդյունքների բողոքարկման և զանգատարկման կարգը:

Ստուգումն իրականացվել է 2010թ. համար:

Համայնքի ղեկավարը գյուղատնտեսության բնագավառում իրականացրել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

Գյուղապետի 26.12.2009թ. թիվ 64 կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով՝ համայնքում 2010թ. հունվարի 1-ից 17-ը անասունների համատարած հաշվառում անցկացնելու համար: Նմանատիպ հանձնաժողով է ստեղծվել նաև 28.12.2010թ. թիվ 65 կարգադրությամբ՝ 2011թ. անասունների համատարած հաշվառում անցկացնելու համար: